ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

9 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020 թ.

№ 13 (1063)

Թերթի առաջին համարը լույս է տեսել 1965 թ. մարտի 11-ին
Երկշաբաթաթերթ ● հրատարակման 55-րդ տարի

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

ՏԱՐՎԱ ՄԱՐԴԸ ՀԱՅ ԶԻՆՎՈՐՆ Է

Անցնող տարին՝ 2020 թվականը, Հայաստանի և հայ ժողովրդի համար մեծ աղետների տարի էր. համաշխարհային համավարակի դեմ պայքարին ավելացավ դավադիր-ահաբեկչական պատերազմը. մեր դարավոր թշնամին Հայկական բանակի դեմ ուղղեց ոչ միայն իր, այլև թուրք եղբայրների ողջ ռազմական արսենալն ու մարդկային ռեսուրսները:

Անցնող տարին փաստեց, որ հայ զինվորը անմրցելի է ոգու ամրությամբ ու հայրենիքի պաշտպանի իր հզոր նկարագրով: Անհավասար պատերազմում մարտնչող հայ զինվորները, որ պատերազմը գրքերից ու ֆիլմերից գիտեին, անօրինակ սխրանքներ գործեցին: Տարվա մարդը միանշանակ հայ զինվորն է:

Ավա՜ղ, նրանցից շատերը բռնեցին անմահության ուղին… Ազգովի խոնարհվում ենք նրանց բոլորի հիշատակի առաջ, խոնարհվում ենք որդեկորույս ծնողների ցավի ու կորստի առաջ:

Մանկավարժական համալսարանի մեծ թվով ուսանողներ ու շրջանավարտներ ևս մասնակցեցին Արցախյան գոյամարտին և հերոսացան մեր երկրի և բուհի պատմության էջերում: Մենք կրկին համոզվեցինք, որ հայ զինվորն ունի պետության ու պետականության հանդեպ պարտքի ու պատասխանատվության գիտակցում. այդ գիտակցումով պայքարեցին հայր ու որդի, կամավորական ու ազատամարտիկ, հոգևորական ու ոստիկան՝ թիկունքում ունենալով Հայաստանն ու ողջ Սփյուռքը:

Մեր միասնականությունն այդ օրերին աննախադեպ էր, սակայն պատերազմն անսպասելի ավարտվեց, և ելքը չվճռվեց մեր օգտին: Թուրք-ազերին տեր դարձավ հայկական հնամենի տարածքների մեծ մասին և շարունակում է պղծել մեր վանքերն ու խաչքարերը:

Հետպատերազմյան իրավիճակը տխուր պատկեր ունի թե՛ Հայաստանում, թե՛ Արցախում: Հայ ժողովուրդը մտահոգված է իր անկախ պետականության պահպանման և երկրի անվտանգության համար, լավատեսությունը կարծես լքել է շատերին: Եռաբլուրը դարձել է մեր ցավի ու արժանապատվության կենդանի վկան… Ցավոք, մենք, դասեր չքաղեցինք պատմությունից, գերագնահատեցինք մեր ուժերը և թերագնահատեցինք բարեկամ-թշնամի հարևաններին:

Տխուր ու ահավոր ցավալի իրականություն է, երբ ողջ ազգը սպասում է հայ գերիների վերադարձին, երբ շատ ծնողներ դեռ չեն ամփոփել իրենց զոհված որդիների մարմինները… Թեև ամեն վերադարձող զինվորի հետ հույսի մի շող է արթնանում՝ ինչ-որ չափով վերադարձնելով մեզ մեր հավատը:

Հուսանք, որ հայ ժողովուրդը գալիք տարում կկարողանա համախմբվել ազգային գաղափարախոսության շուրջ, կկարողանա հաջողել ներքին ու արտաքին քաղաքականության մեջ, հզորացնել Հայաստանը, զերծ մնալով ամենատարբեր կուսակցական շահերից:

Մեզ այսօր ավելի քան երբևէ պետք է հզորանալ՝ վերամիաստավորելով երկրի ռազմական, տնտեսական, դիվանագիտական, կրթական քաղաքականությունը:

Մենք պարտվելու և նահանջելու իրավունք չունենք և դատապարտված ենք պայքարելու՝ ամեն օր, ամեն ժամ կռելով մեր հավաքական կամքը:

Հուսանք, որ 2021 թվականը հայ ժողովրդի համար կլինի խաղաղության մեջ սիրով ու լավատեսությամբ արարելու, նա՛և մեծագույն վճռականությամբ Հայաստանի Հանրապետությունը հզորացնելու տարի:

Հավատանք մեր ուժին և մեր երկրի առաջընթացին:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

Հովհաննես ԹՈՒՄԱՆՅԱՆ

ՄԵՐ ՈՒԽՏԸ

Մենք ուխտ ունենք՝
միշտ դեպի լույս,
Ու գընում ենք մեր ծամփով,
Մըրրիկներով պատած անհույս,
Սև խավարով, մութ ամպով:

Մենք անցել ենք արյան ծովեր,
Սուր ենք տեսել ու կըրակ,
Մեր ճակատը դեմ ենք արել
Մըրրիկներին հակառակ:

Ու թեպետև պատառ-պատառ
Մեր դըրոշը սըրբազան,
Ու մենք չունենք տեղ ու դադար՝
Երկրից երկիր ցիրուցան:

Բայց գընում ենք մենք անվեհեր
Զարկերի տակ չար բախտի,
Մեր աչքերը միշտ դեպի վեր՝
Դեպի լույսը մեր ուխտի:

ԾՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ, ԶԻՆՎՈՐ

Խրոնիկա

«Զաբրայիլի լեռներն այդ գիշեր...

Երգ, որ թևածում էր Վայքում, լսում էինք անընդհատ, պարում ոգևորությամբ մինչ այն պահը, երբ երգը դարձավ իրական. մեզ հենց այդտեղ էլ տարան, գնացինք...»:

…Դավիթ Գորգոյանն ու իր մարտական ընկերները սպասում էին, թե երբ են իրենք էլ պատերազմի, պայքարի դաշտում հայտնվելու. ե՞րբ պիտի գար հրամանը, ե՞րբ…

Եկա՜վ, եկա՜վ հրամանը, օրը…

Ինձ պատմում էր՝ տուրք չտալով ցավալի ու սպիացած մտքերին, պատմում էր վերապրելով…

Հեշտ գործ չէր, օգնում էր գրկում նստած քույրը, ես այդպես զգացի:

«Ճանապարհ ընկանք, երգի հնչյուններն էլի ընկերներիս շուրթերից չէին պոկվում, դադար չկար:

Մեր ոգևորությունն այնքան մեծ էր, որ վախ չէինք զգում, ժամանակ էլ չկար, մոտենում էինք...»:

Գորգոյանը (նրան ընկերները ➤2

ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՏՈ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՀԱՋՈՂ ՄԵԿՆԱՐԿԸ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ

Վերջապես սկսվեց ուսումնական գործընթացը նաև Ստեփանակերտի Մեսրոպ Մաշտոց համալսարանում: Անհամբերությամբ, նաև անհանգստությամբ էի սպասում առաջին օրվան՝ մտածելով, թե ինչպիսի դաս պետք է ստացվի Մայրենիի դասավանդման մեթոդիկա առարկայից այս դժնդակ օրերից հետո:

Հուրախություն բոլորի՝ 8:50-ին համալսարանի ճեմասրահը լիքն էր ուսանողներով...

Դասն սկսվեց...

Դասն սկսվեց հայոց աշխարհից բազում նահատակների բացակայությամբ... ՓԱՌՔ ՈՒ ՊԱՏԻՎ ՄԵՐ ՀԵՐՈՍՆԵՐԻՆ...

Դասն սկսվեց համալսարանի պրոռեկտոր, բոլորիս շատ սիրելի էլեոնորա Արմենակի Հայրապետյանի բացակայությամբ... Աստված հոգին լուսավորի.... ➤3

Մեր Հովհաննեսը

«Մեր դեկանատի Հովհաննեսը նույնպես մեկնեց սահման»: Հասարակ թվացող, բայց հպարտության երանգ պարունակող տողեր են սրանք: Մեր Հովհաննեսի՝ ռազմաճակատ մեկնելու մասին տեղեկացել եմ ֆակուլտետի դեկան պարոն Գալստյանի վերոնշյալ տողերից:

Այո՛, հայրենիքը սիրում է ուժեղ զավակներին: Ուժեղ ես դու, ուժեղ են այն սերունդները, որոնց կրթելու ես հենց դու: Իսկ ինչո՞ւ, քանզի դու կոտրել ես կարծրատիպն այն, թե տղամարդը չի կարող լինել հայոց լեզվի և գրականության ուսուցիչ, կոտրել ես ա՛յն ժամանակ, երբ ակադեմիական երկու աստիճանները որոշել ես ստանալ հենց Բանասիրական ֆակուլտետի շնորհիմամբ: Այժմ, երբ ազգային արժեքների պահպանման ջատագովդ մեկնել ես ռազմաճակատ, շտապում եմ հայտարարել՝ մասնագիտական ընտրությունդ ճիշտ ես կատարել. մենք ունենք այժմ մի ուսուցիչ, ով մասնակցել է պատմության կերտմանը, ով անցել է պատերազմի բովով և ով սերունդներին պատմելու շատ բան կունենա: Այլ կերպ ասած՝ անձնային որակներդ հաջողությամբ զուգակցել ես մասնագիտական որդեգրածդ ուղուն: Եվ ասեմ ավելին, երբ մասնագիտական ճանապարհդ անցնելիս դարձար մեր դեկանատի Հովհաննեսը, կրկի՛ն չդավաճանեցիր քեզ՝ ևս մեկ անգամ փաստելով՝ կոչմանդ տերն ես:

Արդեն բազմամյա ճանապարհդ, գիտենք, լի է եղել վերելք-վայրէջքներով, որոնք հաղթահարելի են եղել քեզ բաժին հասած մի որակի՝ համբերատարության շնորհիվ: Կարևոր մի որակ, որ սերունդներին կհանձնես մերօրյա իրականությունը ներկայացնելիս: Վստահ եմ՝ մեր Հովհաննեսի նման մի քանի ռազմիկ-ուսուցիչների շնորհիվ ունենալու ենք հայոց լեզուն և հայ գրականությունը արժևորող սերունդներ: Իսկ մինչ մտահոգ կլինեինք սերունդների ճակատագրով, «օրերն էլ շատ էին խառնակ, աշխարհից բան չէինք հասկանում», հայտնվեց «մեր Հովհաննեսը վերադարձավ» սպասված գրառումը: Շող մի լույսի ու հույսի…

Բարով եկար: Շնորհակալ ենք…

Աննա ԴԱՎԹՅԱՆ
Բանասիրական ֆակուլտետ, առկա ուսուցման մագիստրատուրա, 1-ին կուրս



■Եթե կորցնենք Արցախը, մենք կշրջենք հայ ժողովրդի պատմության վերջին էջը…

■Իմ նպատակն է կռվել Արցախի հաղթանակի համար, հանուն որի կյանքս ալ անգամ չեմ խնայե:

■Յուրաքանչյուր ժողովրդի հաղթանակ առաջին հերթին ազգային համախմբվածության արդյունք է, որ պիտի կառուցված լինի խելամիտ հաշվարկների վրա:

■Իրական անկախության կարելի է հասնել միայն ու միայն տնտեսական անկախության միջոցով:

■Ղեկավարի պարկեշտ պահվածքն ու ենթակային անձնական օրինակով ուղղորդելու կարողությունը մարտունակ և բարոյապես ամուր զինվորի դաստիարակության նախապայմաններից են:

■Մարդկային արժեքների գնահատման լավագույն տարբերակը ինքնահարգանքն է:

■Շատ նորմալ բան է, որ հայը գա ու իր հայրենիքը պաշտպանե, իրավունքն է բոլորին ու նաև պարտականությունը: Զարմանալին այն է, որ ավելի շատ հայեր չեն եկած:

■Զինվորը զինվոր է, երբ ունի պետական մտածողություն:

■Եթե Սփյուռքում իրավիճակը պահպանվի այնպիսին, ինչպիսին եղել է, մենք երբեք հաղթանակ չենք տոնի: Եթե մենք շարունակենք վատնել մեր ռեսուրսներն ու եռանդը՝ մեր պատմական հայրենիքի վրա զինյալ ներկայություն ապահովելու փոխարեն, մենք բնավ հաղթանակի չենք հասնի:

■Ես երդում տված եմ և կպատկանեմ մեկ մարդու, այդ մարդը հայրենիքի ազատության զինվորն է:

■Ադրբեջանի կառավարությունը հաստատ որոշել է հայերին վտարել, հետևաբար՝ դիմադրելուց բացի այլընտրանք չկա: Մենք իրավունք չունենք այս անգամ էլ պարտվելու: Մենք պետք է հաղթենք:

■Դժվար էր մեր ուղին, բայց նպատակը վեհ էր, իսկ դեպի վեհ նպատակ տանող ուղին հաղթանակ է:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ, ԶԻՆՎՈՐ

➢1 ազգանունով էին դիմում) հրետանավոր էր. Դավիթը, ինքն իրեն նախապատրաստելով, ասում էր. «Ո՞նց եմ հաշվարկներն անելու, ի՞նչ խորամանկ քայլերի եմ դիմելու, հանկարծ սխալ հաշվարկ չանեմ, իմ կրակած ականը մեր վրա չընկնի…»:

Երգը հեղեղի պես հոսում էր. Գորգոյանն իր հրամանատարի հետ անընդհատ քննարկում էր, լսում ամենակարևորը, անհրաժեշտը հաշվարկների վերաբերյալ:

«Ամբողջ ճանապարհին հրամանատարը պատմում էր ու պատմում, խորհուրդներ տալիս. հաշվարկներ այսպես կանես, այնպես կանես. հոգուս խորքում ցավ զգացի. կարծես թե ինքն էլ չէր լինելու ու իրեն փոխարինող մեկը պետք է լիներ:

Մտքերը ցրելու համար ես Pink Floyd էի լսում, երևի օգնում էր: Ճանապարհին նկատեցի՝ շատերը հետ էին գնում, այն էլ՝ ոտքով: Ովքե՞ր էին: Ցավոք, գտա հարցիս պատասխանը՝ փախչողները:

Գիշերով հասանք: Քողարկված գյուղ էր: Անձրևում էր: Դիմացի սարի հետևում թշնամին էր: Լցվեցինք գործով, հերթափոխություն չկար: Անձրևը չդադարեց ուղիղ երեք օր: Անձրևաթիկնոցն էլ չէր օգնում. թրջվել էինք: Ցրտից սրթսրթում էինք, ոսկորներին էր հասել ջուրը…

Սպասում էինք… Ովքեր ողջ էին մնացել պատմում էին անցած օրերի խրոնիկան, պատմում էին դեռ անցնելիք օրերի մասին… Ես չէի լսում. հաշվարկները գլխումս պտտվում էին. «ո՞ւր էր դա ինձ հասցնելու» հարցի պատասխանը՝ չգիտեմ:

Հրամանատարս ասում էր. «Գորգոյան, ինչո՞ւ ես մռութներդ կախել, գիտե՞ս ինչեր ենք անելու…»:

Այդ գիշեր էլի չկարողացա քնել: Մտածում էի. «Խոսքը ուժ ունի». մեռնել չկա, հերոս պետք չէ ընտանիքիս համար, ընկերուհուս համար»:

«Հրամանատար». այդպես էինք դիմում: Տարիքով փոքր էր, անմիջական էր, ընկերական բոլորիս հետ… Հաջորդ առավոտ ամբողջ անձնակազմը իր գործին էր կամ փորձում էր իր առջև դրած պարտականությունը կատարել. ես ու ևս մեկը՝ որպես հրետանավորներ, անում էինք առավելագույնը: Ծածկ չկար, բաց դաշտ էր: Առաջին կրակից հետո մեզ էին լռեցնում, (հատուկ շեշտադրությամբ ասաց այս բառը):

Կրակ, կրակ, չդադարող կրակ… Օրվա մեջ երկու անգամ էր, որ կրակ չկար՝ իրենց հացի ու աղոթքի կամ, ինչպես ասում են, նամազի ժամին: Սով չէինք զգում, էմոցիաներն իրենց գործն արել ու հանգիստ տեղավորվել էին:

Մի դեպք երբեք չեմ մոռանա, անջնջելի խոսակցություն. կողքից լսում էի մեկը մյուսին ասում էր. «Ձուկ, դու մի՛ մեռիր, քեզ շատ եմ սիրում»: Քմծիծաղ տվեցի ու էլի հիշեցի. «Խոսքը ուժ ունի»: Մեր մարտական ընկերներից էր, քիթը տափակ էր, փռված. դրա համար այդ մականունն էինք տվել:

Թմրած էինք: Ողջ մնալու մեր գրավականը թիկունքի ապահովություն էր… Ես չէի վախենում. տղերքն անընդհատ ասում էին.

- Պառկի՛ր, հո չե՞ս գժվել, ախր կրակում են, վիրավորվում են մարդիկ…

- Լու՞րջ,- պատասխանում էի հեգնանքով:

Կապ չկար: Եթե մեկը կապ էր բռնում, որսում, մի ոտքի վրա կանգնած (ցույց էր տալիս ինձ, թե ինչպես), մեկ նամակը ուղարկում էինք միանգամից բոլորին, բոլորի մայրերին. վայրկյաններ էին դրանք, թանկ ակնթարթներ:

«Ամեն ինչ լավ ա, չմտածեք, թույն ա, չմտածեք». բոլորին սա էր հասնում ու ով ինչպե՞ս էր այս տողերը կարդում…

Երբ Վայքից ինձ Զաբրայիլ տարան, մերոնց չէի ասել, մեկը գաղտնի արդեն ասել էր (ժպտում է):

Նորից կրակոցներ, նորից… Ո՞վ կմտածեր, որ այդ «կրակոցներից» մեկը ինձ էր հասնելու: Ինձ ու հրամանատարիս, ընկերներիս բաժանում էր հեռավորությունը ոչ այնքան շատ, ոչ այնքան ցավալի, բայց մենակ էի: Սպասում էի խրամատին կպած ու ինձ թվաց, թե հրետակոծությունը վերջացավ, դադարեց, զենքս վերցրի ու վազեցի տղաների մոտ. այնտեղ «ապահով» էր:

…Չսպասված ականը պայթեց (եթե մինչ այս պահը նստած էր պատմում, այժմ կանգնել էր ու սենյակի մի կողմից մյուս կողմն էր գնում-գալիս): Մի հստակ բան գիտեինք. վայրկյանների ընթացքում պիտի հասցնեինք պառկել: Կիսապառկած էի ու զգացի, որ ձեռքիս մի բան կպավ: Պառկած վիճակում մի միտք անցավ. «Մատներս կորցրի, առանց մատների ո՞նց եմ անելու…»: Անկախ ինձանից գոռացի… Ձեռքս բռնել էի, որ արնաքամ չլինեմ: Ոչ ոք չէր տեսել… Արագ վիրակապեցի (քոլեջում սովորել էի առաջին բուժօգնություն): Տղերքի ձեռքերը դողում էին, վախենում էին վիրակապել, վախենում էին ցավեցնել: Այս լուրը շղթայաբար անցավ խրամատի մի ծայրից մյուս ծայրը. «Հո բան չի՞ եղել, սա՞ղ ա…»: Լսում էի. «Չմտածես, ընկեր, լավ ա լինելու»:

Վիրակապում էի, վիրակապում էինք… Ձեռքը գրկած էինք քնում չնայած ժանգոտել էր… Բայց մի բան հստակ էր. միակ հույսը զենքն էր: Եթե չկրակես, քեզ կկրակեն…

…Հիվանդանոցում էի: Քնել չէի կարողանում: Ընկերներ կորցրի. իրենց ճանաչում էի թե՛ պատերազմի դաշտից, թե՛ քաղաքացիական կյանքից:

Մտքեր, մտքեր, մտքեր…

Կողքի սենյակից մեկը անկողնուց ընկավ գետնին, անկախ ինձնից վեր թռա ու «զենքս վերցրի»:

Մի դեպք էլ հիշեց, սառնարանը ի՞նչ ձայն էր հանում, մտածում էի՝ անօդաչու սարք է…

…Պատերազմը չի վերջացել. անվերջ պայքարելու դրոշմը դաջված է հայի ճակատին:

Ես մտածում էի՝ ինձ վիրակապեցին ու բերեցին-գցեցին կրակը (հիվանդանոցը):

Մենք գնացել էինք վերցնելու մտքով, գործով, բայց…ավելի շատ ենք կորցրել, քան կարող են պատկերացնել:

Ամեն մեռնող ընկերոջ հետ նորից էինք մեռնում…»:

Գորգոյան Դավիթը սովորում է ԵՊՀ տեղեկատվական անվտանգության (կիբեռանվտանգություն) ֆակուլտետում:

Արժանացել է «Հրետանու մասնագետ» և «Երրորդ կարգի մասնագետ» կոչումներին:

Խոնարհումս մեր բոլոր զինվորների առաջ…

Աննա ԿՈՍՏԱՆՅԱՆ
Բանասիրական ֆակուլտետ, բակալավր, 3-րդ կուրս

ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՏՈ



➢1 Համենայն դեպս դասն սկսվեց...Դաս, երբ ուսանողների հայացքները ողողված էին ցասումով ու վրեժխնդրությամբ, անորոշությամբ ու անհանգստությամբ...Նրանց աչքերում փայլում էին վախի, տխրության, տագնապի, կարոտի, խուճապի կայծերը...Իսկ երբ փորձում էին ժպտալ, ժպիտների տակ քողարկված էին հրետակոծության և ռմբակոծության ձայների թողած հետքերը... Շատ դժվար է խուսափել բացասական տեսակետի ընդունումից, երբ բոլորս ուղղակի շրջապատված ենք դրանով....

Ամենափոքր երեխան անգամ ընկալում է իրավիճակը...

Միշտ փոխգործուն մեթոդներով իրականացվող մասնագիտական իմ դասը պետք է վերածեի ապրումների, մտորումների, կարծիքների կիսման ու լավատեսության մարմնավորման դասի...

Յուրաքանչյուրի խոսքի հետ ապրումակցում էինք բոլորս... Անչափ հուզիչ էր տեսարանը... լավատեսության ոչ մի նշույլ...

Մի աքսիոմատիկ ճշմարտություն. բոլորը մեծ երախտագիտությամբ էին արտահայտվում Հայաստանում իրենց հյուրընկալության մասին:

Իմ շատ սիրելի ուսանողներին ես փորձեցի մի քիչ քաջալերել և ոգևորել...

Ներկայացրի որոշակի դրույթներ՝ վերլուծելով և դրանք ներկայացնելով իրավիճակի համատեքստում...

1. ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆԸ ԺՊԻՏԻՑ է ՍԿՍՎՈՒՄ...

Խաղաղության գաղափարն աշխարհի բոլոր ազգերի սեփականությունն է: Որպես բարձրագույն բարիք՝ նրանք խաղաղություն են պահանջում:

2. Հրաժարվում ենք ընդունել այն տեսակետը, որ մարդկությունն այնքան սերտորեն է կապված պատերազմի անաստղ կեսգիշերին, որ խաղաղության պայծառ արշալույսը երբեք չի կարող իրականություն դառնալ: Հավատում ենք, որ անզեն ճշմարտությունն ու սերն են որոշիչ դեր խաղալու:

3. ՍՈՎՈՐԵՆՔ ՆԿԱՏԵԼ ԼԱՎԸ...

4. Եթե դու ընկնում ես լեռան վրայից, ինչու՞ չես փորձում թռչել, չէ՞ որ կորցնելու ոչինչ չունես:

5. Փոքր մարմինը, որի ներսում կա ամուր ոգի և հավատ սեփական առաքելության հանդեպ, կարող է փոխել պատմության ընթացքը:

6. Ամենալավ միջոցը ինքդ քեզ գտնելու համար ուրիշներին օգտակար լինելն է:

7. Եթե դուք ուզում եք փոփոխություն ապագայում, դուք պետք է դառնաք այդ փոփոխությունն այսօր:

8. Դուք ոչնչի չեք հասնի, եթե չսկսեք որևէ նոր բան:

9. Ամեն մեկի մոտ էլ կգա երջանկությունը: Պարտադիր չէ, որ դա տեղի ունենա երեքշաբթի, լույս չորեքշաբթիի գիշերը, պարտադիր չէ, որ տեղի ունենա հունվարին կամ հուլիսին, պարտադիր չէ, որ դա տեղի ունենա լավ եղանակին: Բայց այն անպայման կգա...

10. Չկա երջանկության ոչ մի բանալի, դռները միշտ բաց են:

11. Երջանկությունը կախված չէ այն բանից, թե ով ես դու և ինչ ունես: Այն կախված է միայն նրանից, թե ինչ ես դու մտածում:

Փաստորեն երջանկությունը մարդու ներսում է...

12. Պետք է հասկանալ, որ մարդիկ չեն կարող միանման մտածել, և որ մենք տեսնում ենք միևնույն ճշմարտության կտորները տարբեր անկյունների տակ:

13. Ուժը վախի բացակայության մեջ է, այլ ոչ թե մարմնի մկանների:

14. Հաղթահարենք ատելությունը սիրով, սուտը՝ ճշմարտությամբ, բռնությունը՝ համբերությամբ:

15. Այժմ մեկ այլ՝ նոր սովորություն ձեռք բերելու ժամանակն է. սովորություն՝ միշտ բավարարված լինելու ցանկացած իրավիճակով կամ իրադարձությամբ:

Ես գիտեմ որոշ մարդկանց, ովքեր սիրում են պարզապես ոսկի փնտրել: Զվարճալին այն է, որ հիմնականում նրանց ոսկու կաթսաները լցվում են միայն գետաքարերով: Սակայն դա նրանց այնքան էլ չի անհանգստացնում, և գիտե՞ք՝ ինչու: Նրանց ուշադրությունը դրա վրա չի սևեռված: Նրանք այնքան են տարված շողացող քարի փնտրտուքով, որ անգամ չեն էլ նկատում անպետք ավազակույտերը: Նրանց ուշադրությունը կենտրոնացված է այդ մանր և չնչին ոսկու կտորների վրա, ու նրանց գիտակցությունը պարզապես զտում է մնացած ամեն ինչը:

Իսկ ինչպիսին է նրանց արծագանքը, երբ վերջապես հայտնաբերում են ոսկու այդ փոքրիկ կտորը: Նրանք երբեք չեն ասում, թե պետք է ավելի մեծ եռանդով աշխատեն այդ ոսկին գտնելու համար: Փոխարենը նրանք իրոք ոգևորվում են և ավելի են կենտրոնանում, իսկ նրանց շնորհապարտության ու երախտագիտության զգացումը ավելի է մեծանում: Իսկ դուք, սիրելի ուսանողներ, կկարողանայի՞ք այդպիսի մոտեցում դրսևորել ձեր առօրյա կյանքում:

Վերջում ներկայացրի էնթոնի Հոփկինսի նամակը:

Դիմում եմ հուսահատ երիտասարդներին:

Հավատացեք ինձ. ես կարդացել եմ մի շամանի մասին: Երաշտ էր. անասունները, մարդիկ մահանում էին: Եվ շամանը ասաց. «Փոս փորեք: Փորեք դրանք անձրևի համար»:

«Բայց անձրև չկա»:

«Փորեք փոսերը, և անձրևները կգան»:

Անհավատները կասեն, որ դա անհեթեթություն է: Լավ, հավատացեք նրան, ինչին ուզում եք: Սա ռացիոնալ մտածողություն է: Բայց ես չեմ կարծում, որ ներկայումս գործում է ռացիոնալ մտածողությունը: Ձեզ հարկավոր է իռացիոնալ մտածողություն, ենթագիտակցություն:

Երբ փոքր էի, երազում էի դառնալ այնպիսին, ինչպիսին հիմա եմ: Գուցե ես պայծառատեսության շնորհ ունեի, չգիտեմ: Ես մեծ հույսեր չունեի, որ երազանքս կիրականանա, բայց այն պատահեց ինձ հետ: Եվ հիմա ես հավատում եմ, որ մենք կարող ենք խտացնել ժամանակը, ձգել այն դեպի մեզ:

Ապագայի մասին այդ երազանքները.

«Օ՜, ես ինչ-որ բան կանեմ հաջորդ տարի»:

Այն գոյություն չունի, վաղը գոյություն չունի, հաջորդ ժամը գոյություն չունի: Դա ուղղակի հնարավորություն է: Բայց մենք կարող ենք ժամանակը տեղափոխել դեպի ներկա, դեպի հիմա՝ ուղիղ արևային հանգույց, մեր հոգու մեջ:

Ինչ էլ որ մտածեք անել, հավատացեք դրան, հավատացեք և նորից հավատացեք: Եթե չեք հավատում, խաղացեք իբր հավատում եք: Գործեք այնպես, կարծես հավատում եք: Հենց սա է ուժը: Սա բացարձակ ուժ է:

Իսկ հետո դա կլինի: Վստահեք ինձ: Աշխատել է իմ կյանքում՝ կաշխատի նաև ձեր կյանքում: Երբեք մի՛ հանձնվեք: Հավատացե՛ք, հավատացե՛ք, հավատացե՛ք: Ագնոստիկ եք, աթեիստ, ով էլ որ լինեք, կապ չունի:

ՀԱՎԱՏԱՑԵ՛Ք, ՀԱՎԱՏԱՑԵ՛Ք, ՀԱՎԱՏԱՑԵ՛Ք:

Մեզ նաև պետք է կամք՝ գործելու և խուսափելու այն աղբյուրներից, որոնք մեզ վրա բացասական ազդեցություն են թողնում:

Նշյալ դրույթների ճիշտ վերլուծության արդյունքում ուսանողներս հիացական ժպիտներով արտահայտվեցին. «Ինչքա՜ն էինք կարոտել այս հանդիպմանը...»:

Դասս իմ կարծիքով հաջողված էր... որովհետև ուսանողներիս աչքերում ուրախության կայծեր տեսա.....

ԱՆՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ
Մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ
Ստեփանակերտ, Արցախ

ԱԺԴԱՀԱԿ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

«ԻՆՁ ՈՂՋԵՐԻ ՄԵՋ ՓՆՏՐԵՔ»

Այս էլ քանի գիշեր նույն երազն է՝ Շուշիի ժայռին հենված վիրավոր հայորդին մարտնչում է բազմապատիկ թշնամու դեմ: Անհավասար է մարտը: Վիրավոր ընկերները նահանջում են, փորձում են իրեն էլ տանել՝ չի համաձայնվում. «Տղերքին մենակ չեմ թողնի, գնացեք, ձեր նահանջը կապահովեմ: Տղերքը թշնամու ծուղակում են»: Ու կռվում է... Արյունը կաթիլ-կաթիլ իջնում է մայր հողին, գնում խառնվում Աղավնո գետի ջրերին, հետո Որոտանին, հետո Արաքսին ու Քուռի ջրերի հետ արյուն է տանում աշխարհին:

Արյունը ջուր է դառնում, թե աշխարհը կուրացել է...

Ծառայության ընթացքում մասնակցել էր քառօրյա պատերազմին՝ կրկին կամավոր, չի նշվել ոչ մի հարթակում, ինքն էլ թույլ չի տվել ոչ մի տեղ նշվի, և այն հարցին, որ թեկուզ համալսարանի վարձից կզեղչվի, պատասխանել է.

- Դրա կարիքը չկա, ես դրա համար չեմ գնացել, որ ինչ-որ տեղ գրեն:

Ծառայությունից հետո դարձել էր երաժիշտ, նկարիչ... Ընդունվել էր Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Գեղարվեստական կրթության ֆակուլտետ: Անհանգիստ, կյանքով լեցուն մի անհատ, որն ամենուր ժպիտ էր տարածում, ապրելու բերկրանք:

Պատերազմը սկսվեց... Առաջին իսկ օրվանից կամավորագրվեց...

Պատերազմի առաջին օրերից օգնում էր փախստականներին՝ հիվանդանոց, հոսպիտալ էր գնում, սնունդ հասցնում, արյուն տալիս ու էլի իր տեղը չէր գտնում: Անընդհատ զանգում էր զինկոմիսարիատ՝ «Ինչո՞ւ չեք կանչում»: «Դու քո գործը անում ես, սպասիր, կկանչենք»:

Մեկնեց Շուշի՝ առանց վարանելու կամավորագրվեց «Շուշիի արագ արձագանքման» ջոկատին: Մեկնելուց առաջ դասընկերուհին խնդրեց, որ մնա մասնակցի իր ծննդյան օրվան. «Մյուս ծննդյանդ անպայման կգամ»... Ու գնաց՝ ասելով. «Որ չզանգեմ, չանհանգստանաք»:

Ու մարտնչում էր՝ հենված Շուշիի ժայռերին: Աչքերի դեմ ընկերներն էին, քեռու որդին՝ Արմենը, որը ծնվել էր Գանձակի այն ոչ հեռավոր կոտորածների օրերին, և որին բարուրով մի կերպ հասցրել էին Երևան, և որը տասնութը նոր բոլորած մեկնել էր ծառայության ու զոհվել թշնամու գնդակից:

Արյունը կաթիլ-կաթիլ ներծծվում էր Շուշիի ժայռերին: Այդ նույն պահին Արուս քույրը Աստվածաշունչը կրծքին՝ ոչ այն է քնած, ոչ այն է արթուն, լսեց մի ձայն. «Ինձ կփնտրեք ողջերի մեջ»:

Եռաբլուրում հանգչում է նրա աճյունը.

- Ես Աժդահակ Զավենի Կիրակոսյանն եմ: Երեք քույրերից հետո ծնողներս փափագել են արու զավակ ունենալ: Մայրս ծնկաչոք սրբերի դուռն է գնացել, ու ես ծնվել եմ,- ասում է Աժդահակը: Հոգևորականի աղոթքի ու խնկի բույրի հետ հերոս զինվորների երկխոսությունը մի պահ դադարում է, ու նրանց հոգիները բարձրանում են երկինք: Գնում, նստում են Շուշիի Մռավի բարձունքները տարին բոլոր պարուրող ամպերին, որ շարունակեն իրենց անվերջանալի երկխոսությունը...

Տիկին Վալյան՝ Աժդահակի մայրը, շշնջում է.

- Ես սրբերի դեմ ծնկի իջած աղոթում էի որդուս, մեր որդիների համար, ավա՜ղ, չգիտեի, որ Սուրբը՝ Սրբերը, մեր կողքին են՝ մեր օջախներում:

Իսկ Զավեն հայրը ասում է.

- Իմ որդուն ես հասկանում եմ, նա պետք է գնար: Ասում էր՝ ինչպե՞ս չգնամ՝ ես մայր ունեմ, երեք քույր...

Իսկ Արուս քույրը ծնկահար շշնջում է.

- Եղբա՛յր, ես նոր հասկացա, որ մեր ՀԱՅՐԵՆԻՔԸ դու էիր:

...Եվ նորից նույն երազն է՝ իրական, տեսանելի մի երազ՝ Շուշիի ժայռին վիրավոր Աժդահակը մարտնչում է անհաշիվ թշնամու դեմ, ու նրա հետ, նրա կողքին՝ երիտասարդ վառվռուն տղաներ, բոլորն էլ վիրավոր ու արյունը կաթիլ կաթիլ իջնում է ժայռերն ի վար, լցվում Աղավնո-Հագարո գետը ու գնում գնում... Հետո նրանց հոգիները բարձրանում ու բազմում են Շուշիի, Մռավի՝ տարին բոլոր օղակող, ամպերի վրա ու նայում Եռաբլուրներին: Գալիս են, մխիթարում հարազատներին ու նորից երազավառ հայացքներով սավառնում են այնտեղ՝ ամպերի վրա: Պատարագում են Շուշիի Ամենափրկիչում, Ամարասում, Դադիվանքում...

- Մեր Եռաբլուրները չենք ուզում գերեզմանոցներ դառնան, մենք կգանք, հանգիստ կննջենք այն ժամանակ, երբ նրանք ընկալվեն նորից պանթեոններ, երբ Նարեկացու խոսքերով. «Աստծո պահած ժողովուրդը» չպարտվի...

Արուս ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
Աժդահակ Կիրակոսյանի քույր
Մարիա ՋԱՆԻԲԵԿՅԱՆ
Գեղարվեստական կրթության ֆակուլտետ, ՈՒԽ լրատվական հանձնաժողովի ղեկավար

ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏՔ Է ՀԱՎԱՏԱ ԱՅԴ ԵՐԱԶԱՆՔԻՆ

Պատերազմը ծանր հետևանքներ ունեցավ Հայաստանի և հայ ժողովրդի համար: Բայց դա չի նշանակում, որ անվերջ ողբալու ենք, հիասթափվելու ենք, կորցնելու ենք հավատը վաղվա հանդեպ:

Անհրաժեշտ է մեր մեջ ուժ գտնել ոտքի կանգնելու, հայրենիքն ուժեղացնելու, կորցրածը ետ բերելու համար: Սա ոչ միայն պատվի խնդիր է, մեր սասանված հեղինակությունը և արժանապատվությունը վերականգնելու մղում, այլև մեր անվտանգ ապագան կառուցելու անհրաժեշտություն:

Շատ կարևոր է նոր սերնդի մոտեցումը, հավատը վաղվա հաղթանակի նկատմամբ: Պետք է վերափոխել սերունդների կրթության, դաստիարակության, գիտության հանդեպ ունեցած մեր մոտեցումը: Պետք է վերանայել մեր կրթական աշխարհայացքը: Կրթությունն ստանալը պետք է պայմանավորել ոչ միայն և ոչ այնքան սեփական բարեկեցությունը երաշխավորելու ձգտումով, այլև այդ կրթությամբ հայրենքին, պետությանը օգտակար դառնալու հաշվարկով: Ձևական ոչինչ չպիտի լինի:

Նախ պետք է միավորվել ազգային գաղափարների շուրջ: Չթերագնահատելով, չարժեզրկելով համաշխարհային առաջադեմ մտքի, համամարդկային ձեռքբերումների, համերաշխության կարևորությունը՝ այդ ամենին պետք է նայել ազգայինի պրիզմայով:

Անհրաժեշտ է նոր սերնդի մասնագիտական կրթության մեջ լրջագույն ուշադրություն դարձնել ռազմաարդյունաբերական ոլորտի զարգացումն ապահովող ճյուղերին, մեր տնտեսության չօգտագործված և չօգտագործվող հնարավորություններին, բանակի արմատական վերազինմանը, պետության համաչափ զարգացմանը, միջազգային հարթակներում մեր պետության խախտված իրավունքների վերականգնմանը: Առանձնահատուկ վերաբերմունք է անհրաժեշտ մեր պատմության վերարժևորմանն ու ազգային դաստիարակությանը: Շատ կարևոր է նաև սփյուռքում հայապահպանությունը, ինչպես նաև սփյուռքահայության մասնագիտական կարողունակության՝ հայրենիքի համար թիրախային օգտագործումը:

Ժամանակ չունենք կորցնելու, և օր առաջ պետք է լծվել այդ գործին: Նշված խնդիրների արդյունավետ լուծումն ապահովելու համար մեզնից յուրաքանչյուրը պարտավոր է իր ուժերի ներածին չափով, իր հնարավորությունների սահմաններում գործել:

Կրթության ձգտող սերունդը լուրջ հավակնություններ պետք է դրսևորի պետության ուժեղացման գործում: Ամեն մեկը լավագույնը լինելու ցանկության հետ մեկ տեղ պետք է մեր պետությունը լավագույնների շարքում տեսնելու երազանք ունենա և իր քայլն անի դեպի այդ երազանքը: Ավագներս պարտավոր ենք ամեն կերպ սատարել երիտասարդներին:

Տեղեկատվական տեխնոլոգիաների, ռազմաարդյունաբերական ոլորտի, գյուղատնտեսության, կառավարման, մանկավարժության, միջազգային իրավունքի և դիվանագիտության աշխարհի լավագույն մասնագետների շարքում պետք հայեր լինեն, շատ լինեն և իրենց մասնագիտությունը ծառայեցնեն Հայաստանին: Պետք է խորացնել Հայաստանի և սփյուռքի հայ երիտասարդ գիտնականների համագործակցությունը Հայաստանում գիտության զարգացումն արագացնելու, Հայաստան-Սփյուռք գիտաարդյունաբերական միասնություն ստեղծելու համար: Հայագիտությունը պետք է փաղաքշանքի առարկա դառնա բոլորի համար, հայագիտությամբ զբաղվելը՝ հպարտություն:

Եթե ուզում ենք որպես ազգ և ժողովուրդ մեր ապագան ունենալ այս արևի տակ, պարտավոր ենք ունենալ շատ ուժեղ պետություն: Երիտասարդությունը պետք հավատա այդ երազանքին և համառությամբ գնա դրա ետևից:

Խաչատուր ՍՏԵՓԱՆՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ համաշխարհային պատմության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ

Կարո ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԳԵՏԻՆԸ ՄՏՆԵՆ

Իրիկունը կրտսեր որդիս ինձ դիմավորեց թուղթ ու գրիչով, մտազբաղ.

- Պապ, այս տարի Ձմեռ պապին գալո՞ւ է:

- Ինչո՞ւ չպիտի գա, բալես: Եթե կարծում ես, որ մեր երկինքը անպաշտպան ա ու Ձմեռ պապիին եղջերուախառը խփելու ենք՝ գցեն, ասեմ որ...

- Հերիք ա, պապ: Չգիտեմ՝ ինչեր ես ասում, բայց ուզում եմ, որ արդեն նամակ գրենք Ձմեռ պապիին:

- Շատ էլ ճիշտ ես անում, որոշե՞լ ես՝ այս տարի ինչ ենք ուզելու:

- Հա:

- Ու ի՞նչ:

- Անօդաչու սարք:

- Ի՞նչ մունդառ բան ես մտածել, տղես, արի քո սիրած խաղալիքներից ուզենք:

- Չէ, արդեն որոշված ա: Էսօր մանկապարտեզի էրեխեքով որոշեցինք, որ բոլորս էլ անօդաչու սարքեր ենք ուզելու:

- Աղջիկնե՞րն էլ:

- Ամենից շատ հենց աղջիկներն են ուզում:

- Լավ, տուր թուղթդ հենց հիմա գրեմ:

-... Ոնց որ երկար գրեցիր:

- Չէ, տղես, ինչ ուզել ես՝ էդ էլ գրեցի:

- Հաստա՞տ ավել-պակաս բաներ չես գրել:

- Ասեցի չէ, էլի:

- Դե ծալի, դիր ծրարի մեջ, որ առավոտը տանես:

Նամակը ծալելիս մի անգամ էլ աչքի անցկացրի ու սարսափով նկատեցի, որ Ձմեռ պապին գրած նամակս առաջին անգամ ավարտել եմ անեծքով. «Գետինը մտնեն բոլոր նրանք, որոնք մեր էրեխեքին թողեցին առանց անօդաչու սարքերի»:



ՀՐԱՏԱՐԱԿՎԵԼ Է ԳԻՏԱԿԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆԻ ՆՈՐ ՀԱՄԱՐԸ

Մանկավարժական համալսարանի «Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ» գիտական հանդեսը, որի առաջին համարը լույս էր տեսել մայիսին, միտված է նպաստելու Հայաստանի Հանրապետությունում բարձրագույն մանկավարժահոգեբանական կրթական ոլորտի զարգացմանն ու առաջընթացին:

Արդեն հրապարակում է հանդեսի երկրորդ համարը:

Գիտական խմբագրակազմի որոշմամբ տարին երկու անգամ հրատարակվող գիտական այս պարբերականում ընդգրկված են գիտատեսական և գիտամեթոդական բնույթի հոդվածներ, որոնք օժանդակելու են մանկավարժության և հոգեբանության բնագավառների առջև ծառացած խնդիրների լուծմանը, կրթության կառավարման հիմնախնդիրների լուսաբանմանը, համաշխարհային փորձի ուսումնասիրմանը և միջազգային կրթական գործընթացների առաջադրած դրույթների համակարգված և միասնական ներդրմանը:

Ինչպես արդեն տեղեկացրել ենք, ամսագրի խմբագրակազմում են հոգեբանության, փիլիսոփայության և տնտեսագիտության ոլորտի ճանաչված գիտնականներ ԱՄՆ-ից, Միացյալ Թագավորությունից, Ռուսաստանի Դաշնությունից, Վրաստանից:

Գիտական հանդեսը նախատեսված է մանկավարժների, հոգեբանների, բարձրագույն կրթության համակարգում աշխատողների և առհասարակ մանկավարժահոգեբանական գիտությունների զարգացմամբ շահագրգիռ յուրաքանչյուրի համար:

Ամսագիրը ներգրավված է միջազգային CROSSREF, Platform & workflou by OJS/PKP համակարգում:



ՏԻԳՐԱՆ ԹԱՆԳԱՄՅԱՆԻ ԽՈՀԱՊՐՈՒՄԸ

«Մտորումներ» խորագրով գիրքը, որ ներկայացվում է ձեր դատին, վաստակաշատ գիտնական և մանկավարժ Տիգրան Վարազդատի Թանգամյանի հոգու պատմությունն է, հուզապրումի և խոհի՝ նուրբ իմացականության կնիքով հատկանշվող համադրություն՝ խոհապրում: Համընդգրկուն սահմաններում ներկայանում են նրա կենսափիլիսոփայությունը՝ խոհապատումը, սիրապրումը, բնաշխարհի մասին մտորումները, խորին խոնարհումը ծնողների հիշատակի առջև, սողոմոնյան հոգնությունը: Չափածոյի ձևաչափով ներկայացող առաջին հատվածն ամփոփում են բանաստեղծական փոքր ձևի թանգամյանական իրագործումներ՝ հոգու և մտքի թրթիռներ, հուզապրումի պատառիկներ:

Գրքի երկրորդ՝ «Անցյալից, ներկայից և ապագայում» խորագրով հատվածը արձակի հայտնակերպում է: Այստեղ հուշեր ու մտածումներ են, իր և ժամանակակիցների տպավորությունները, մտահոգությունները, սերն ու կարոտը, ուր խորքային ընդհանրացումներով ժամանակի դիմագիծն է պարզվում նաև: Այստեղ է, որ առանձնահատուկ խորքով ամբողջանում է իր հոգու և իմացականության վրա խոր հետք թողած հոր՝ Վարազդատ Թանգամյանի կերպարը: Բացառիկ հուզականությամբ են բնորոշվում Տ. Թանգամյանի նամակը՝ ուղղված հայրենի Ջավախքի դպրոցականներին, հոր պահպանված նամակները ռազմաճակատից՝ զետեղված «Տոհմապատում» բաժնում: «Ամենամեծ պոետը բնությունն է» խորագրով զրույցը բացահայտում է փիլիսոփա կենսաբանի աշխարհատեսությունը:

Հեղինակի նախնյաց պայծառ հիշատակին նվիրված գրքին առանձնահատուկ խորք են հաղորդում վաստակաշատ կենսաբանի թոռան՝ Զուլիա Թանգամյանի փառահեղ նկարազարդումները:



Գիրքը բացվում է հեղինակի՝ «Նախաբանի փոխարեն» գրությամբ և փակվում... Եվ չի փակվում. իր խոհապրումը հեղինակի ապագա մտաթափանցումների համար նոր հորիզոններ է պատկերագծում և շարունակում ապրել այն սրտերում, որ նույն և միևնույն կշռույթով են տրոփում:

Լիլիթ ՍԵՅՐԱՆՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

ՑԱՎԱԼԻ ԿՈՐՈՒՍՏ

Խորը վշտով տեղեկացնում ենք, որ կյանքից անժամանակ հեռացել է Մանկավարժական համալսարանի ընդհանուր հարցերի գծով պրոռեկտոր Արմեն Թամազյանը:

Արմեն Թամազյանը ծնվել է 1959 թվականին, 1980-ին գերազանցությամբ ավարտել է Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտի պլանատնտեսագիտական ֆակուլտետը և ստացել տնտեսագետի որակավորում: 1985-ից, ավարտելով ասպիրանտական կրթությունը, զբաղվել է ինչպես գիտական գործունեությամբ, այնպես էլ զբաղեցրել տարբեր պաշտոններ տնտեսական ոլորտի տարբեր կազմակերպություններում:

2011 թվականից մինչ օրս Մանկավարժական համալսարանի ընդհանուր հարցերի գծով պրոռեկտորն էր: Իր անմիջական ղեկավարմամբ այդ տարիներին իրագործվել են բարեկարգման, վերանորոգման և բազմաթիվ այլ ծրագրեր: Արմեն Թամազյանը նախաձեռնող ղեկավար էր, աշխատանքային գործունեության ընթացքում իրականացրել է բազմաթիվ ծրագրեր, բուհի նվիրյալ աշխատակից էր:

Դասավանդել է տարբեր ուսումնական հաստատություններում՝ Երևանի պետական տնտեսագիտական, Հայաստանի Ֆրանսիական, Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարաններում, Ֆինանսաբանկային քոլեջում և այլն: Հեղինակել է հարկային քաղաքականության և հարկային վարչարարության տարբեր հիմնահարցերի վերաբերյալ մի շարք հոդվածներ և գիտական զեկույցների թեզիսներ, ինչպես նաև «Հարկային օրենսդրության հիմունքներ» ուսումնական ձեռնարկը:

Արմեն Թամազյանի՝ վաստակաշատ մանկավարժի, արհեստավարժ ղեկավարի, ընտանիքի հոգատար հոր հիշատակը վառ կմնա իր գործընկերների և ուսանողների սրտերում:

Մանկավարժական համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմը ցավակցում է Թամազյանների ընտանիքին՝ Արմեն Թամազյանի անժամանակ մահվան կապակցությամբ:

ՄԵԾԱՇՆՈՐՀ ԱՐՎԵՍՏԱԳԵՏՆ ՈՒ ՎԱՍՏԱԿԱՇԱՏ ՄԱՆԿԱՎԱՐԺԸ

Կյանքի 73-րդ տարում մահացել է Մանկավարժական համալսարանի Կուլտուրայի ֆակուլտետի Օպերատորության, գեղարվեստական լուսանկարչության և սոցիալ-մշակութային գործունեության ամբիոնի դոցենտ Զավեն Սարգսյանը:

Զավեն Սարգսյանը ծնվել է 1947 թվականին Երևանում: 1972 թվականին ավարտել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտը՝ ինժեներ-ռադիոտեխնիկ մասնագիտությամբ:

1986-1992 թվականներին եղել է Հայաստանի ժողովրդական արվեստի պետական թանգարանի տնօրեն:

Լուսանկարչությամբ զբաղվել է վաղ հասակից, եղել է կինոռեժիսոր Սերգեյ Փարաջանովի անձնական լուսանկարիչը: 1992 թվականից մինչ օրս Սերգեյ Փարաջանովի թանգարանի տնօրենն էր:

Անհատական ցուցահանդեսներ է ունեցել Հայաստանում, ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Գերմանիայում, Չինաստանում, Ռուսաստանում, Վրաստանում, Սերբիայում և այլ երկրներում: 1974թ-ից տպագրվել է Հայաստանի ամսագրերում, եղել է Հայկական հանրագիտարանի լուսանկարիչը, նկարազարդել է բազմաթիվ գրքեր:

Զավեն Սարգսյանը Մանկավարժական համալսարանում դասավանդում էր 2011 թվականից: Նա իր մասնագիտական փորձն ու գիտելիքներն անմնացորդ նվիրումով փոխանցում էր ապագա լուսանկարիչներին ու օպերատորներին:

Զավեն Սարգսյանի՝ մեծաշնորհ արվեստագետի և վաստակաշատ մանկավարժի հիշատակը վառ կմնա իր գործընկերների և ուսանողների սրտերում:

ՎԱՍՏԱԿԱՇԱՏ ՄԱՆԿԱՎԱՐԺՆ ՈՒ ԱՆՎԱՆԻ ԳԻՏՆԱԿԱՆԸ

Կյանքից հեռացել է Մանկավարժական համալսարանի Պատմության և հասարակագիտության ֆակուլտետի Հայոց պատմության ամբիոնի պրոֆեսոր, պատմական գիտությունների դոկտոր Էդուարդ Պողոսյանը:

Էդուարդ Պողոսյանը 1975 թվականին ավարտել է Մանկավարժական համալսարանի Պատմության ֆակուլտետը, իսկ 1982 թվականից գիտամանկավարժական ողջ գործունեությունը պրոֆեսոր Պողոսյանն անցկացրել է հարազատ կրթօջախում, դասավանդել Քաղաքագիտության, ապա նաև Հայոց պատմության ամբիոններում: Առաջատար գիտնականի հետաքրքրությունների առանցքում նորանկախ Հայաստանի պետականության կայացման հիմնահարցերն էին, հայոց պատմության նոր և նորագույն շրջանները:

Էդուարդ Պողոսյանն ուներ պրպտուն միտք և վերլուծական խորը մտածողություն: Մի շարք հոդվածների, մենագրությունների, Հայաստանի պետության և իրավունքի պատմության դասագրքի հեղինակ էր:

Էդուարդ Պողոսյանի՝ վաստակաշատ մանկավարժի, անվանի գիտնականի հիշատակը վառ կմնա իր գործընկերների և ուսանողների սրտերում:

Մահացել է պրոֆեսոր Սամվել Խուդոյանը

60 տարեկան հասակում մահացել է Մանկավարժական համալսարանի Կիրառական հոգեբանության ամբիոնի վարիչ, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սամվել Խուդոյանը:

Սամվել Խուդոյանը 1982 թվականին ավարտել է Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական Մանկավարժական համալսարանի հայոց լեզվի և գրականության ֆակուլտետը, ասպիրանտուրան ավարտել է հոգեբանության գծով: Հոգեբանական գիտության ուղղությամբ նրա աշխատանքային գործունեության սկիզբը դրվել է հարազատ բուհում, ուր աշխատել է որպես գիտաշխատող, դասախոս, ապա մինչև կյանքի վերջը՝ ամբիոնի վարիչ:

Նշանավոր հոգեբանը դասավանդել է ոչ միայն Մանկավարժականում, այլև մի շարք բուհերում, դասախոսություններով հանդես եկել աշխարհի մի շարք առաջատար համալսարաններում, անցկացրել բազմաթիվ մասնագիտական վերապատրաստումներ:

Սամվել Խուդոյանը 1980-ականների վերջերից զբաղվում էր նաև հոգեթերապիայով, մասնավորապես՝ հիպնոթերապիայով, իսկ 1990-ականների կեսերից նաև հոգեթերապիայի ուսուցողական դասընթացներ և թրեյնինգներ է իրականացրել: Ստեղծել է մի շարք հոգեթերապևտիկ տեխնիկաներ և ներշնչման մեխանիզմներին նվիրված կոնցեպցիա: 2006 թվականին հեղինակել և կազմակերպել է հայերեն առաջին հոգեթերապևտիկ (ընկճվածության հոգեվիճակի հաղթահարմանն ուղղված) ձայնասկավառակի արտադրությունը: Նա վարել է նաև հոգեբանական հաղորդաշար (Հ1), իսկ Ար հեռուստաալիքում աշխատել է որպես հոգեբան-խորհրդատու:

Պրոֆեսոր Խուդոյանը հեղինակ է հոգեբանության և հոգեթերապիայի հարցերին նվիրված շուրջ 100 գիտական աշխատությունների, հինգ մենագրության, այդ թվում՝ երկու մեթոդական ձեռնարկների: Արդյունավետորեն համագործակցում էր արտերկրյա գործընկերների հետ և նախորդ տարում կազմակերպեց և հաջողությամբ իրականացրեց միջազգային աննախադեպ գիտական կոնֆերանս՝ Հայաստան բերելով ոլորտի անվանի անհատներին:

Սամվել Խուդոյանի՝ վաստակաշատ մանկավարժի, անվանի գիտնականի հիշատակը վառ կմնա իր գործընկերների և ուսանողների սրտերում:

ԱՌՑԱՆՑ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Էրազմուս+ Կարողությունների զարգացման ARMDOCT և MODEST ծրագրերի միջև անցկացվեց առցանց հանդիպում:

Հանդիպմանը ներկայացվեց երկու ծրագրերի ընթացքում իրականացվող աշխատանքները Հայաստանում դոկտորական կրթության բարելավման ուղղությամբ, իրականացվեց փորձի փոխանակում, ինչպես նաև քննարկվեց ծրագրերի միջև հետագա համագործակցությունը:

Առցանց հանդիպմանը մասնակցում էին ծրագրերի հայաստանյան և եվրոպական ավելի քան 25 գործընկեր համալսարանների ներկայացուցիչներ, ինչպես նաև Էրազմուս+ հայաստանյան գրասենյակի ծրագրի ղեկավար Լանա Կառլովան: Մանկավարժական համալսարանը Էրազմուս+ ARMDOCT և MODEST ծրագրերի գործընկեր համալսարան է և նույնպես մասնակցում էր հանդիպմանը:

Հավելենք, որ Էրազմուս+ MODEST ծրագիրը մեկնարկել է 2018-ին, իսկ ARMDOCT-ը՝ 2019-ին:

Էրազմուս+ MODEST՝ Գիտության ոլորտում հետբուհական կրթության արդիականացումը և դասավանդման մեթոդաբանության բարելավումը ծրագրի նպատակն է Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի (EHEA) և Եվրոպական հետազոտական տարածքի (ERA) շրջանակներում գործընկեր երկրների բարձրագույն ուսումնական հաստատությունների համագործակցային կարողությունների ընդլայնումը հետբուհական կրթության ոլորտում:

Էրազմուս+ ARMDOCT՝ Դոկտորական կրթության բարեփոխումը Հայաստանում՝ ակադեմիական համայնքի, արդյունաբերության պահանջներին և ԵՄ փորձին համապատասխան ծրագրի նպատակն է բարեփոխել դոկտորական կրթությունը Հայաստանում Զալցբուրգի սկզբունքներին համահունչ՝ ազգային քաղաքականության և իրավական կարգավորող փաստաթղթերի, ինստիտուցիոնալ ընթացակարգերի վերանայման, գիտության և հետազոտության ինտեգրման համար անհրաժեշտ համակարգի ապահովման միջոցով: Այն ուղղված է խթանելու բուհերի և գիտահետազոտական ինստիտուտների, արդյունաբերական ոլորտի սերտ համագործակցությունը՝ ուղղված դոկտորական կրթության միջազգայնացմանը, Եվրոպական բարձրագույն կրթական տարածքին (EHEA) և Եվրոպական բարձրագույն հետազոտական տարածքին (ERA) ինտեգրմանը:

Դասախոսն ուսանողի աչքերով. Ռուզաննա ՍԻՄՈՆՅԱՆ

ԻՄ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՑԻՉԸ ԴԱՍԱԳՐՔԵՐՆ ԷԻՆ



Կենսաբանությունը գիտություն է, որը լի է բազմաթիվ գաղտնիքներով ու չբացահայտված կողմերով: Շատերն են զբաղվում այս խորքային գիտությամբ, մանրակրկիտ ուսումնասիրում են կենդանի օրգանիզմների, դրանց և շրջակա միջավայրի բազմաբնույթ փոխհարաբերությունները: Դա բավականին բարդ, բայց և անսահման հետաքրքիր աշխատանք է, որը դարձել է մասնագիտություն Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի դասախոս, կենսաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Ռուզաննա Սիմոնյանի համար: Կենսաբանության հանդեպ անսահման սերն ու նվիրվածությունը ձևավորվել են դեռևս դպրոցական տարիներին, բայց, ի տարբերություն շատերի, այս դեպքում դա կապված չէր ուսուցչի անձի հետ, այլ ինքնաբուխ էր, բնածին:

«Դպրոցական տարիներին իմ լավագույն ուսուցիչը և խորհրդատուն դասագրքերս էին, որոնք օգնում էին բացահայտել աշխարհը: Բարդ թեմաները չհասկանալու դեպքում բազմիցս կարդում էի նույն նյութը, և ի վերջո այն վերահիմաստավորվում էր, դառնում էր հասկանալի և մատչելի»,- պատմում է ընկեր Սիմոնյանը:

Մեծ ցանկության, հետաքրքրասիրության և համառության շնորհիվ ընդունվել է Երևանի պետական համալսարանի կենսաբանական ֆակուլտետ: Արդեն այդ ժամանակ վստահ էր, որ պետք է ուսումը շարունակի ասպիրանտուրայում: Դեռ դպրոցական տարիներին կենսաբանության բազմաթիվ ճյուղերից նախապատվությունը տվել է գենետիկային, սակայն ճակատագրի ճանապարհները նրան ուղղորդել են դեպի Բուսաբանության ինստիտուտ, որտեղ առաջին քայլերն է կատարել գիտության բնագավառում:

«Հարուստ ու անկրկնելի է Հայաստանի բուսական աշխարհը: Ֆլորայի և բուսականության այս զարմանալի բազմազանությունը նորանոր հետազոտությունների ասպարեզ է՝ հատկապես արդի բարդ էկոլոգիական վիճակում»,- ասում է ընկեր Սիմոնյանը:

Չնայած բուսաբանության դերի և նշանակության կարևորմանը, նրա հետաքրքրությունների շրջանակը չի սահմանափակվում միայն բույսերի ուսումնասիրմամբ, քանի որ ըստ նրա կենսաբանությունը բազմաշերտ և բազմամակարդակ գիտություն է, և այդ բոլոր շերտերի բացահայտումն ու ուսումնասիրումը ոչ պակաս հետաքրքիր են և կարևոր: Բավականին երկար ժամանակ աշխատելով ՀՀ ԳԱԱ բուսաբանության ինստիտուտում, նրան այնուամենայնիվ ձգում էին դասախոսական աշխատանքն ու ուսուցման գործընթացը: Եվ, ի վերջո 2009 թվականին, մասնակցելով Մանկավարժական համալսարանում անցկացվող մրցույթին, աշխատանքի է անցել Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետում: Արդեն տաս տարուց ավելի է, ինչ դասավանդում է և այս տարիների ընթացքում ձևավորել է դասախոսի սեփական մոդելն ու դասավանդման մեթոդները:

Ուսանողներից շատերն առաջին հանդիպումից հետո նրա մեջ տեսնում են միայն խիստ և պահանջկոտ դասախոսի, սակայն հետագայում անցկացվող գործնական պարապմունքները և ուսումնական պրակտիկաներն օգնում են բացահայտել լիովին այլ ընկեր Սիմոնյանի: Ուսանողի մեջ կարևորելով ազնվությունը, համեստությունն ու սովորելու ձգտումը՝ նա կարողանում է դառնալ սովորողների լավ ընկերն ու աջակիցը, նրանց հետ կառուցում է փոխադարձ հարգանքի, վստահության և ազնվության վրա հիմնված հարաբերություններ:

Մարիամ ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՌՑԱՆՑ ՀԱՐԹԱԿՈՒՄ

Մանկավարժական համալսարանի Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնը համաշխարհային վարակի պայմաններում շարունակում է աշխատանքային գործունեությունը օնլայն հարթակներում:

Ամբիոնի վարիչ Վլադիմիր Կարապետյանի գլխավորությամբ ամբիոնի աշխատակիցներն ապրիլի 9-10-ը մասնակցել են Ուկրաինայի Խարկով քաղաքում «Дошкольное образование в современном образовательном пространстве: актуальные проблемы, опыт, инновации» խորագրով տեղի ունեցած 6-րդ գիտագործնական կոնֆերանսին: Կոնֆերանսը նվիրված էր Հ. Ս. Սկովորոդայի անվան Խարկովի ազգային մանկավարժական համալսարանի հիմնադրման 215-ամյակին:

Կոնֆերանսի աշխատանքների կազմակերպմանը Ուկրաինայի Գիտության և կրթության նախարարության, մի շարք առաջատար՝ Վրաստանի և Բելառուսի մանկավարժական համալսարանների հետ մասնակցում էր նաև Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը, իսկ Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի վարիչ Վլադիմիր Կարապետյանն ընդգրկվել է ծրագրային կոմիտեի կազմում:

Գիտագործնական կոնֆերանսին մասնակցել է Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի 7 դասախոս:

Ամբիոնի աշխատակիցները ապրիլի 30-ին ևս իրենց մասնակցությունն են բերել Կիևում օնլայն տարբերակով անցկացված «Технологии формирования позитивной общественного мнения об образовательных инновациях» խորագրով համաուկրաինական գիտապրակտիկ կոնֆերանսին, որին զեկուցումներով և հոդվածներով հանդես են եկել նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի վարիչ Վլադիմիր Կարապետյանը և դոցենտ Ալլա Դալլաքյանը:

Հավելենք, որ Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի վարիչ Վլադիմիր Կարապետյանը և դասախոսներ Ալլա Դալլաքյանն ու Հասմիկ Սարգսյանը ընդգրկվել են «МЕТОДОЛОГІЯ СУЧАСНИХ НАУКОВИХ ДОСЛІДЖЕНЬ» խորագրով գիտագործնական կոնֆերանսի նյութերի տպագրման խնբագրական խորհրդում:

ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ՍՏԵՂԾՎԱԾ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ԱԴՐԲԵՋԱՆ

Խորհրդային Միությունն աչքի էր ընկնում իր կազմի մեջ մտնող արհեստական կազմավորումներով (Ղազախստան, Ղըրղըզստան, Սպիտակ Ռուսաստան՝ Բելառուս, Ծայրամաս՝ Ուկրաինա, Ադրբեջան):

Ադրբեջանն արհեստականորեն ստեղծված պետություն է հայերի, վրացիների, պարսիկների, թալիշների, թաթերի, ուդիների, լեզգիների և այլ ժողովուրդների հողերի վրա: Այդ պետությունը ստեղծվել է հայերի վերջնական ոչնչացման համար: Ադրբեջանցիները որպես արհեստական ստեղծված «էթնոսի» անվանում հայտնվել են միայն 1936 թ.: Այդ անվանումը տեղանքի բնակչի անունն է, ոչ թե ազգության, ինչպես օրինակ՝ կովկասցի, ուրալցի, սիբիրցի և այլն: Մինչ այդ կոչվում էին կովկասյան թաթարներ կամ թուրքեր:

Ինչպես պատահեց, որ Ադրբեջանը հայտնվեց այնտեղ, որտեղ չի եղել պատմականորեն: Ադրբեջանը երբեք չի եղել Ռուսական կայսրության կազմում: Առաջին աշխարհամարտի ավարտին փլուզվեցին Ռուսական և Օսմանյան կայսրությունները: 1918 թ. Հարավային Կովկասում ձևավորվեցին երեք պետություններ: Երրորդը՝ առաջին մի քանի օրերին կոչվեց ոչ թե Ադրբեջան, այլ «Արևելյան Անդրկովկասի մահմեդական ժողովրդավարական հանրապետություն»: Պետությանը հարկադրաբար Ադրբեջան կոչեցին, որպեսզի Իրանական Ադրբեջանից պահանջներ ունենան, կուլ տան Իրանը, գրավեն Կովկասը, մտնեն Կենտրոնական Ասիա և պանթուրքական պետություն ստեղծեն:

Ահա, թե ինչ է գրում մարիոնետային կազմավորման մասին սպիտակգվարդիական շարժման առաջնորդ ռուս գեներալ Անտոն Դենիկինը. «Ադրբեջանական Հանրապետությունում ամեն ինչ արհեստական է, ոչ իսկական: Թուրքերի պարտությունից հետո տարածաշրջանում էստաֆետն իրենց ձեռքը վերցրին անգլիացիները, իսկ ավելի ուշ՝ բոլշևիկները: Վերջիններիս ախորժակը նախկին Ռուսական կայսրության սահմաններից հեռու տարածվեց»:

Ադրբեջանական էթնոսի անունն առաջացել է ստալինյան սահմանադրության ընդունումից հետո՝ 1936 թվականին, որն իրականացրեց ԽՍՀՄ միասնականացումը: Սահմանադրության ընդունումից հետո այս հանրապետության ողջ մահմեդական բնակչությունը պետք է կոչվեր ադրբեջանցի՝ ձուլվելով թուրքալեզու մյուս ժողովուրդներին:

Խորհրդային Ադրբեջանի եզակիությունը կայանում էր նրանում, որ տարբեր հողերից ու ժողովուրդներից կազմավորված արհեստական այս պետությունն իրականացնում էր թուրքականացման քաղաքականություն: Բոլշևիկների փորձերը՝ որքան հնարավոր է ընդարձակել հեղափոխության սահմաններն արևելք և թուրք-մահմեդական բնակչությանը նվեր տալ հայկական հողերը՝ Նախիջևանի և Լեռնային Ղարաբաղի տարածքները:

Եվ ողջ խորհրդային ժամանակահատվածում ղարաբաղյան հակամարտությունն այդպես էլ իր լուծումը չստացավ: 1991 թ. անկախացած Ադրբեջանը շարունակում է ավելացնել իր «պատմությունը»: Սումգայիթյան ու Բաքվի ջարդերը գազանային սպանությունների տեղիք տվեցին: Պատմության աղավաղումը և ագրեսիվ հռետորաբանությունը դարձան Ադրբեջանի ղեկավարության բնորոշ գծերը: Խեղաթյուրվում է պատմությունը, ոչնչացվում է տեղի արմատական բնակչության՝ հայերի, վրացիների, լեզգիների, թալիշների, ավարների, ուդիների մշակութային ձեռքբերումները:

Երբ ես 8-րդ դասարանում էի սովորում, ԽՍՀՄ տնտեսական աշխարհագրության դասագրքի հեղինակ տխրահռչակ Մամաևը տգիտության դասական օրինակ էր ծառայում: Խոսելով Ադրբեջանի տարածքում ապրող ժողովուրդների մասին՝ նա գրում էր. «Նախիջևանի Ինքնավար Հանրապետությունում ապրում են նախիջևանցիները, իսկ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում՝ լեռնային ղարաբաղցիները»: Բայց ապուշության գագաթնակետը նա չէր, այլ այն հայը, ով ռուսերեն տեքստից այդպես էլ թարգմանում էր հայերեն: Մի տգիտություն էլ նորօրյա «գիտնականներն» են շրջանառության մեջ դնում՝ ադրբեջանցիներին անվանելով «լեռնային հրեաներ»: Մինչդեռ «Լեռնային հրեա» էթնոսի անվանում չկա. դա կեղծ և շինծու անվանում է:

Յուրիկ ՄՈՒՐԱԴՅԱՆ
Աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Թերթելով անցյալի էջերը

Գևորգ Չեփչյան



Գևորգ Չեփչյանը ծնվել է 1927 թվականի դեկտեմբերի 10-ին Դոնի Ռոստովում: 1944-48 թթ. սովորել է Երևանի նորաբաց թատերական ինստիտուտում՝ Վարդան Աճեմյանի արվեստանոցում: 1948 թվականից աշխատել է Երևանի Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնում՝ որպես դերասան: 1954 թվականին, Վարդան Աճեմյանի հրավերով, տեղափոխվել է Երևանի Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոն:

Խաղացել է բազում դերեր մի շարք ներկայացումներում՝ Ա. Շիրվանզադեի «Նամուս» (Սեյրան), «Քաոս» (Արշակ), Ա. Կրոնինի «Բրոուդիի ամրոցը» (Մետ), Վ. Շեքսպիրի «Ռոմեո և Ջուլիետ» (Պարիս), Ֆ. Դոստոևսկու «Ապուշ» (Գանյա), Ա. Օստրովսկու «Կատաղի փողեր» (Գլումով), Հ. Պարոնյանի «Պաղտասար ախպար» (Երկաթ), Ժ. Հարությունյանի «Հարսնացուն հյուսիսից» (Երվանդ), Զ. Դարյանի «Հանրապետության նախագահը» (Վարժապետ), Ն. Զարյանի «Հացավան» (Աղաս), Պ. Զեյթունցյանի «Ոտքի դատարանն է գալիս» (Լեմբերգ) և այլն: Նկարահանվել է «Հայֆիլմ» կինոստուդիայի «01-99», «Նվագախմբի տղաները», «Արշակ», «Ոսկե ցլիկ», «Մոսֆիլմ» կինոստուդիայի «Սաննիկովի երկիրը», «Коней на переправе не меняют», «Լենֆիլմ» կինոստուդիայի «Ոսկե ական», «Սվեռլովֆիլմ» կինոստուդիայի «Դեղն ընդդեմ վախի» և այլ գեղարվեստական ֆիլմերում:

Գևորգ Չեփչյանը բազում դերեր է կերտել նաև հեռուստաթատրոնում:

1996 թ. դասավանդել է Երևանի Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Կուլտուրայի ֆակուլտետի ռեժիսուրայի բաժնում:

Արժանացել է մի շարք պարգևների և պրոֆեսորի կոչման: Հայ թատրոնը և մշակույթը բազմիցս ներկայացրել արտասահմանյան տարբեր երկրներում: Հեղինակել և տպագրել է 2 գիրք՝ նվիրված իր ուսուցիչ Վարդան Աճեմյանին՝ «Արվեստը՝ բարեկամության կամուրջ» և «Ռեժիսորը՝ կարոտը սրտում»:

1971 թվականին արժանացել է Հայաստանի վաստակավոր արտիստի կոչման:

Մահացել է Երևանում 2016 թ. հունվարի 12-ին:

ՀՊՄՀ ԹԱՆԳԱՐԱՆ

Ցուցահանդես՝ նվիրված Մարտիրոս Սարյանի ծննդյան 140-ամյակին

ՌԴ-ում ՀՀ դեսպանությանը կից Մոսկվայի «Վերածնունդ» հայկական կիրակնօրյա դպրոցում կազմակերպվեց դպրոցի սաների գեղեցիկ ցուցահանդեսը՝ նվիրված ԽՍՀՄ Գեղարվեստի ակադեմիայի անդամ, ԽՍՀՄ ժողովրդական նկարիչ, բազմաթիվ պարգևների և մրցանակների դափնեկիր Մարտիրոս Սարյանի ծննդյան 140-ամյակին:

Դեռևս 2019 թվականի ամռանը Երևանում իրենց արձակուրդը վայելող «Վերածնունդ» դպրոցի սաները դպրոցի տնօրեն, մանկավարժական գիտությունների թեկնածու Շողիկ Փահլևանյանի նախաձեռնությամբ այցելեցին 1967 թվականին հիմնադրված Մարտիրոս Սարյանի տուն-թանգարան: Թանգարանի աշխատակազմը ի դեմս տնօրենի՝ բանասիրական գիտությունների թեկնածու Ռուզաննա Սարյանի, ջերմորեն ընդունեց դպրոցի սաներին: Թանգարանի գիտաշխատող, էքսկուրսավար Վարդուհի Ադամյանը հանգամանորեն ներկայացրեց մեծ Վարպետի հանճարեղ աշխատանքները: Դպրոցի սաներից Նանե Հայրապետյանին, բացառության կարգով, հնարավորություն ընձեռնվեց նվագել Առնո Բաբաջանյանի «Նոկտյուրն» ստեղծագործությունը Մ. Սարյանի որդու՝ Ղազարոս Սարյանի ռոյալի վրա: Հանդիպումը համեմվեց նաև աշակերտների հայրենասիրական երգերի և բանաստեղծությունների կատարումներով:

Ռուզաննա Սարյանն իր կողմից նվիրեց մեծ Վարպետի հայտնի նկարների գծապատկերները, որոնք էլ «Վերածնունդ» դպրոցի սաները ներկեցին իրենց պատկերացրած գույներով՝ օգտագործելով տարբեր նկարչական պարագաներ: Պետք է հավելել, որ նման համագործակցության արդյունքում էլ ծնվեց այսպիսի վառ ու գունեղ ցուցահանդեսի կազմակերպման գաղափարը:

Ցուցահանդեսի շրջանակներում ճանաչողական զեկույցներով հանդես եկան նաև աշակերտներ Մառա Այվազյանը, Անգելինա Խաչատրյանը և Մերի Հայրապետյանը:

Հարկ է նշել, որ նոյմբերի 23-ին նշվում է «Ձրաներկի միջազգային օրը»: Այդ օրվան էր նվիրված դպրոցի սան Իրինա Ավետյանի նկարների հեղինակային ցուցահանդեսը:

Աննա ԿՅՈՒՐԵՂՅԱՆ

Թող ոչ ոք չասի, թե մենք պարտվել ենք,
Թե հանձնվել ենք կամ նահանջել ենք,
էլ երբեք չասե՛ք, թե մենք շատ թույլ ենք,
Թե թշնամու դեմ միշտ էլ անզոր ենք…
Չասե՛ք՝ էլ կյանքը անիմաստ բան է,
Չասե՛ք՝ մեռնելը ավելի լավ է,
Չասե՛ք՝ կյանք չկա, սիրտը պաղել է,
Մեռնելու տենչը հոգին այրել է...
Իսկ ո՞վ է ասել, թե մենք պարտվել ենք,
Ո՞վ է մեզ ասել, թե հանձնվել ենք,
Թե մենք կորած ենք, խեղճ ու անպետք ենք,
Թե էլ չենք ապրի, թե մենք վախկոտ ենք...
Մենք երբե՛ք, երբե՛ք չենք նահանջելու,
Թեև ցավն այս մեզ շատ է տանջելու…
Մենք միշտ եղել ենք, չենք կորսվելու,
Թեկուզ կորցրի՛նք, շա՜տ կոտրվեցինք,
Գիշեր ու ցերեկ մենք արտասվեցինք,
Կորստի ցավից բարձր ճչացինք,
Մեզ մեղադրեցինք, որ հանուն կյանքի,
Հանուն մե՛ր կյանքի Տղերք զոհեցինք…
Բայց այսօր բա՛վ է մեղավոր փնտրենք,
Բա՛վ է անընդհատ մեր ներսո՛ւմ պարտվենք ...
Պարտված կլինեինք միայն այն դեպքում,
Երբ չլինեինք այսօր մենք կանգուն,
Երբ ՀԱՅ անունը ջնջված կլիներ,
Երբ որդու շիրմին լացող չլիներ,
Պարտված կլինեինք գիտե՞ք որ դեպքում,
Երբ ոչ մի զինվոր է՛լ չէր գա իր տուն,
Երբ զինվոր հայրը չէր գրկի որդուն,
Երբ որ դիրքերից նա իջներ իր տուն:
...Պարտված կլինեինք, երբ չլինեինք,
Երբ մեր տղերքի ժպիտը չտեսնեինք,
Երբ մեր ընկերոջ թա՛նկ շիրմի վրա
Ծաղիկ չդնեինք ու չլացեինք ...
Բայց մենք չե՛նք պարտվել,
Մենք կանք, կլինենք…
Իմ հայ ժողովուրդ, դու տոկո՛ւն մնա,
Պարզապես պետք է հավատքով զինվենք,
Թեկուզ խոր ցավով, միևնույն է՝ կանք,
Պիտ հզորանանք, հողից ուժ առնենք
Ու մեր Տղերքին մենք չմոռանանք...
…Ինձ ո՛չ ոք չասի, թե մենք պարտվել ենք:

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է

2020-2021 ուսումնական տարվա ասպիրանտուրայի ընդունելություն

(հեռակա ուսուցում)

1. Դասավանդման և ուսուցման մեթոդիկա (օտար լեզու) - ԺԳ.00.02 - 1 տեղ

Դիմորդները ներկայացնում են հետևյալ փաստաթղթերը.

1. Ասպիրանտուրա ընդունվելու համար տրվում է դիմում հաստատության ղեկավարի անունով՝ կցելով հետևյալ փաստաթղթերը՝

1) բակալավրի և մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի կամ օրդինատորի դիպլոմի ու դրանց հավելվածների պատճենները (օտարերկրյա պետություններում բարձրագույն կրթություն ստացածների համար՝ փաստաթուղթ նրանց կրթության համարժեքության մասին),

2) ընտրված մասնագիտությամբ հրատարակված առնվազն մեկ գիտական աշխատանքի պատճենը կամ գիտական ռեֆերատ՝ առնվազն 20 տպագրական էջի սահմաններում,

3) անձնագրի պատճեն,

4) ինքնակենսագրություն և չորս լուսանկար (3x4 չափսի),

5) քաղվածք աշխատանքային գրքույկից (առկայության դեպքում):

Փաստաթղթերն ընդունվում են հայտարարության հրապարակման օրից մինչև ս/թ դեկտեմբերի 19-ը (ներառյալ):

Ասպիրանտուրայի ընդունելության մասնագիտական քննությունները կազմակերպվելու են ս/թ դեկտեմբերի 21-ից 23-ը ներառյալ:

Տեղեկությունների համար դիմել հետևյալ հասցեով՝ Երևան, Տիգրան Մեծի 17, 3-րդ հարկ, Գիտահետազոտական կենտրոն, հեռ՝. 59-70-29:

ՁՄՌԱՆ ԱՐԵՎ

ԱՅՍՕՐ էլ՝ ձմեռային մի գեղեցիկ երեկո, ոչ շատ մեծ Վանաձոր քաղաքում, բազմաթիվ տների ու պատուհանների մեջ բոցավառվում էր այս տան ճրագը, այնտեղ լավ էր ամեն բան... Այնտեղ համերաշխ էին ու սիրում էին միմյանց...

Դուռը սահելով բացվում էր...

- Մա՞մ:

- Հա, տղա՛ս, ես եմ,- պատասխանեց աշխատանքից հոգնած վերադարձած մայրը՝ տիկին Ծովինարը, խոհանոցից ձայնող տղային:

- Ո՞նց ես:

- Լավ եմ: Մի քիչ հոգնած եմ, բայց կյանքն է էդպիսին: Ապրելու համար պիտի աշխատել,-պատասխանեց մայրը, և երբ ուզում էր շունչ վերցնել ու հարցնել, թե ինչպես է որդին, չհասցրեց, տղան անմիջապես բարձրաձայն կանչեց նրան:

- Դե լվացվի ու արի: Քանի ճաշը տաք ա՝ լցնեմ կեր, դու ես հոգնած, ես էլ հո հոգնա՞ծ չեմ:

- Իմ խելոք Արամ: Հիմա լվացվեմ ու գամ: Թո՛ղ, ես սեղան կգցեմ: Հայրդ էլ շուտով կգա:

Արամը պատանի էր: Մեկն այն տասնվեցամյա տղաներից, որ տարիքի համեմատ լուրջ էր նայում կյանքին: Հասկանում էր, որ ինչքան էլ մայրը չասի, միևնույն է աշխատանքից հոգնած է տուն գալու, ու փորձում էր թեթևացնել մոր հոգսը:

- Մա՛մ,- ցածրաձայն բացականչեց Արամը, երբ մայր և որդի նստած սպասում էին, թե երբ պիտի գա հայրն ու բակից տուն վերադառնան Արամի երկու եղբայրները ու միասին նստեն մեկ սեղանի շուրջ՝ ընթրելու:

- Այո, տղաս:

- Վաղը գնում եմ Սպիտակ, քանի՞ ամիս կլինի, ինչ ընկերներիս չեմ տեսել: Այսօր խոսում էի Արտակի հետ:

- Բայց...

- Հասկանում եմ, մա՛մ, ես դեռ 16 տարեկան եմ: Բայց Սպիտակն էլ հեռու չէ: Կպած է այստեղին:

- Չգիտեմ, այնպես չեմ ուզում որ գնաս: Թող մի ուրիշ անգամ, գուցե արձակուրդին հայրդ համաձայնվի ու իրար հետ գնաք:

- Բայց այսօր դեկտեմբերի վեցն է, արձակուրդին դեռ շատ կա և հետո ի՞նչ իմանաս ամանորյա այդ անցուդարձի մեջ երբ ու որտեղ կհասցնենք գնալ:

- Արա՛մ, անհանգստանում եմ քեզ համար:

- Երեխա չեմ, մա՛մ: Առավոտյան կգնամ ու շուտ էլ հետ կգամ:

- Սպասիր հայրդ թող գա՝ կորոշենք մի բան:

Դուռն այս անգամ ավելի արագ բացվեց: Հայրն ավելի առույգ էր կամ էլ չէր ցանկանում ցույց տալ հոգնածությունը:

Արամը դեռ լուռ էր: Հոր հետ նույնքան ազատ չէր խոսում, ինչքան մոր հետ: Դրա համար սպասեց: Ընթրեցին, հետո հեռուստացույցի դիմաց մի քիչ նստեցին: Իսկ Արամը շարունակ լուռ նայում էր հորը: Հայրը այնքան լուրջ աչքերով էր: Բայց ոչինչ չէր ասում Արամին: Այս անհեացած լռությունն այնքան տևեց, մինչև որ սենյակում մնացին Արամը և հայրը:

- Դե հիմա ասա ինձ, Արա՛մ, ի՞նչ կա մտքիդ: Այսօր տարօրինակ ես,- փոքր-ինչ ժպտալով ասաց հայրը:

- Լավ եմ, պա՛պ: Ոչինչ էլ չի եղել: Ուղղակի ուզում էի վաղն առավոտյան Սպիտակ գնալ՝ ընկերներիս կտեսնեմ, կարոտել եմ նրանց:

- Ուզում ես գնա՞լ,- մի փոքր դադար տվեց, այնուհետև տեսնելով տղայի աչքերը, շարունակեց,- գնա: Տղա՛ս, բայց զգույշ եղիր: Ճիշտ է, որ պատմեմ թե քո տարիքում ինչեր եմ արել, բերանդ բաց կմնա: Ու հիմա էլ իմ ժամանակները չեն, ութսունութ թվականն է, կորելը հեշտ չէ, հեռախոս կա ու նման բաներ: Բայց ամեն դեպքում աշխարհը մեծ է, իսկ դու ընդամենը տասնվեցամյա պատանի: Զգույշ կլինես:

- Շնորհակալ եմ, պա՛պ,- Արամի աչքերը փայլում էին: Վերջապես կտեսներ ընկերներին ու կարոտը կառներ:

- Մահճակալի կողքի դարակում փող ունեմ պահած: Կվերցնես այնքան, ինչքան որ պետք է, դեռ մի բան էլ ավելի:

- Լավ, իսկ հիմա բարի գիշեր:

- Բարի գիշեր, տղա՛ս:

Արամը հպարտանալու առիթ էր տալիս և՛ մորը, և՛ հորը: Շատ պարտաճանաչ, խելացի ու գրագետ տղա էր: Տատն առիթը բաց չէր թողնում թոռանն օրհնելու համար և ամեն հնարավոր աքսեսուարը գտնում էր նրան չար աչքից պաշտպանելու նպատակով:

Քաղաքի վրա իջել էր խաղաղ ու լուռ գիշերը: Քնել էր քաղաքը: Արամի մայրը նույնպես քնել էր, բայց սիրտն արթուն էր: Նա սպասումի մեջ էր և ուրախ չէր: Երանի՜ թե վաղը տղան չգնա Սպիտակ, այդպես ավելի հանգիստ կլինի:

Ծանրացնելով սարերի գագաթները՝ արևը դուրս էր գալիս և փորձում էր մի գրկախառնությամբ լուսավորել քաղաքի լուսամուտները, բայց տաքացնել չէր կարող՝ ձմեռ էր, ցուրտ: Նման էր հին հիշողության: Հիշելիս կժպտաս ու կլուսավորվես, բայց այդ ջերմությունն այլևս երբեք չես զգա:

- Չե՞ս ուշանում, մա՛մ:

- Կճանապարհեմ քեզ, նոր կգնամ,- մեկ բաժակ թեյ լցնելով՝ ասաց մայրն ու շարունակեց,- խմիր սա:

- Մամ, արդեն երկրորդ բաժակն ես լցնում, չեմ ուզում:

- Լավ չեմ ստիպի: Ի՞նչ ասաց հայրդ երեկ:

- Դե ասաց՝ գնա, բայց զգույշ կլինես:

- Արա՛մ, հայրդ ճիշտ է ասել: Ինչոր կերպ կապ կհաստատես հետս, որ ես իմանամ՝ որտեղ ես: Ու շուտ հետ կգաս:

- Լավ, մա՛մ, կզանգեմ: Իսկ հիմա արդեն ուշ է, ես գնացի:

Գրկախառնության պահին մայրը չէր ցանկանում բաց թողնել որդուն: Այնքան վատ մի զգացում էր մտել մեջը, չգիտես ինչու:

- Մա՛մ, բաց թող: Ուշ է, գնացի:

Արագ քայլերով Արամը դուրս թռավ տնից ու շտապեց ընկերներին տեսնելու:

Սպիտակ տանող ճանապարհն Արամն արագ անցավ ու, մտքերի մեջ սուզված, նա շարունակ պատկերացնում էր, թե արդեն հասել է տեղ ու ընկերներին է գրկում: Սկզբից մոտենում է առաջինին, գրկում ու ասում, թե ինչքան էր կարոտել, հետո՝ մյուսին...

- Դե, Արա՛մ, ուշքի արի, արդեն հասել ես,- Արամին արթնացրեց գրկող ընկերոջ հարազատ ձայնը:

- Հազիվ եմ եկել, մայրս կարծես չէր ուզում թողնել, բայց դե ես համոզեցի ու հիմա միասին ենք: Ու կզրուցենք իրար հետ՝ ինչքան ուզենք:

- Դե գնացինք, ինչքան արագ քայլենք, այնքան ավելի շատ ժամանակ կկարողանանք անցկացնել,- այս մի ընկերը կարծես թե շատ էր շտապում:

- Ձեր տանը հեռախոս կա, չէ՞: Մաման շատ է անհանգստանում: Քանի անգամ ասել եմ՝ փոքր չեմ, բայց մեկ է՝ իր համար, անկախ տարիքից, երեխա եմ:

- Մի մտածիր, հեռախոս էլ ունեմ, հեռուստացույց էլ, ռադիո էլ: Համ ֆիլմ կնայենք, համ կզանգես:

Տղաների քայլքը վազքի էր նման: Շտապում էին հասնել տուն ու հեռուստացույց նայեին, թղթախաղ խաղային, զրուցեին ու իրարից կարոտներն առնեին:

- Մա՞մ, հա, հա հասել եմ, ամեն ինչ լավ է... Հա, հենց իրենց տանն ենք, հասցեն լավ գիտես... Բայց դժվար թե պետք գա... Շուտ կգամ... Լավ, ընկերներս ինձ են սպասում, հեռուստացույցով տասնմեկն անց երեսուն լավ ֆիլմ կա...գնամ նայենք:

Մոր «բարի ժամանցից» հետո Արամը դրեց լսափողն ու շտապեց ընկերների մոտ: Ռուսական արտադրության այդ կատակերգությունը նոր էր սկսել:

...Աստիճաններով տնօրենի սենյակից մինչ իր աշխատավայր հասնելը շատ երկար չտևեց:

- Խոսեցի՞ր տղայիդ հետ:

- Սիրտդ ընկա՞վ տեղը:

- Այո, այո, ամեն բան լավ է, կարելի է սուրճ խմել,- հանգիստ ձայնով էր, բայց սիրտը դեռ լիովին չէր հանգստացել:

- Հիմա կբերեմ սուրճը, արդեն գազի վրա է:

- Ապրի արևդ,- ասաց Ծովինարն ու անցավ գործի:

Սուրճը շատ չուշացավ: Սեղանին էր, բայց տիկին Ծովինարը դեռ չէր շտապում խմել: Առաջին անգամ երբ ուզեց ձեռքը տանի բաժակին, նկատեց, թե ինչպես է բաժակի սուրճը ցնցվում: Իսկ երբ առաստաղից կախված ջահը սկսեց շարժվել, ինքնաբերաբար ձայնեց.

- Երկրաշարժ,- ու բոլորը դուրս վազեցին:

Հեռուստացույցն աղմուկով շուռ եկավ՝ քանդվող պատերի և առաստաղից թափվող ծեփի փոշու ներքո:

- Զգույշ, դեպի դուռը...

- Այս ինչ գրողի տարած պատուհաս էր...

Երանի թե հասցնեին գնալ դեպի դուռը: Մինչ Արամն ընկերների հետ ամուր հող էր ուզում, երերացող տան առաստաղը փլվեց երիտասարդների գլխին:

Կարծես թե ցնցումն ավարտվեց:

- Ինչ ցնցում էր, բայց կարծես թե քաղաքն այդքան էլ չի ավերվել:

- Տղերքս, տղերքս,-անհանգիստ ձայնով գոռում էր տիկին Ծովինարը՝ փորձելով ուշքի գալ:

- Նոր ռադիոյով լսեցի, որ Լենինականն էլ է ավերվել, բայց ամենամեծ վնասը Սպիտակինն է:

-Ի՞նչ, որտե՞ղ:

- Սպիտակում,- ճիշտ է, տիկին Ծովինարն արդեն հասկացել էր, բայց չէր ուզում հավատալ:

- Արա՜մս, Արա՜մ,- մինչ նա ձեռքերը դեմքին դրած մտածում էր տղայի մասին, մի մեքենա մոտեցավ փողոցում խմբված մարդկանց.

- Նստի՛ր, արագ:

Ծովինարի ամուսինն էր: Եղբոր հետ, մեքենայով եկել էր կնոջ հետևից:

- Սպի...Սպիտակում...

- Գիտենք, հենց այնտեղ ենք շտապում:

- Իսկ Արմենե՞նք, ո՞նց են, հո բան չի պատահել:

- Նրանք լավ են, մի անհանգստացիր: Փառք Աստծո ոչ մի քարաբեկոր նրանց բաժին չի հասել:

- Արա՛մ, ես եմ մեղավոր, ես... Ինչո՞ւ, ինչո՞ւ թողեցի, որ գնա... Ա՜խր սիրտս կանխազգում էր... Ինչո՞ւ,- ամբողջ ճանապարհը շարունակվեց Ծովինարի լացով, իսկ ամուսինն իր մեջ ուժ չէր գտնում կնոջը հանգստացնելու: Իր սիրտն էլ էր ցավում, բայց ցույց չէր տալիս վիշտը:

- Կանգնե՛ք,-բղավեց նա լացակումած ձայնով,-այստեղ էր՝ ընկերոջ տունն այստեղ էր, Արամս էլ է այստեղ:

- Ինչի՞ց իմացար,-տխուր էր ամուսնու ձայնը:

- Հաշվելով, երևի... Քաղաքում շատ եմ եղել ու տան տեղն էլ գիտեմ,-ասաց Ծովինարը, թախծոտ ձայնով,-չգիտեմ մի բան ինձ հուշում է, որ այստեղ է:

Երեքով իջան մեքենայից և արագ մոտեցան փլատակներին: Մի խումբ տղաներ քանդում էին քարերը, դեռ մինչև նրանց գալը: Համատարած ողջույնից հետո աշխատանքի անցան: Ծովինարը մեծ ջանասիրությամբ տեղից պոկում էր փոքր քարաբեկորները՝ տղային ողջ գտնելու վերջին հույսով:

- Մա՜մ...

- Դուք է՞լ լսեցիք: Արամս է, տղաս,- Ծովինարի սառած դեմքին հանկարծ ժպիտ հայտնվեց:

- Մա՛մ...

- Այստեղ, եկե՛ք հանենք նրան: Արամս ողջ է,- սա ասելով՝ նա կանգնեց մի քարակույտի վրա և շարունակեց՝ դիմելով տղային.

-Արա՛մ, դիմացիր: Հիմա մենք քեզ դուրս կհանենք: Մենք քեզ հետ ենք:

Արամն այնքան էլ ուժ չուներ ևս մեկ անգամ գոռալու, ուստի լռությամբ արձագանքեց մոր խոսքին:

Քարամաքրման ժամանակ նրանց միացան անգամ այն երիտասարդները, ովքեր փորձում էին ողջ մարդ գտնել ու օգնել: Մոտ տասնհինգ րոպե տևեց: Նրանք միասնական աշխատում էին ու Արամին դուրս բերեցին փլատակի տակից:

- Կներեք, տղերք, տղես ողջ է, նրան պիտի հասցնենք հիվանդանոց,- ասաց Ծովինարի ամուսինը՝ օգնելով եղբորը, որ Արամին դնեն մեքենայի մեջ:

- Ոչինչ, հասկանում ենք քեզ: Դու հանգիստ գնա... Հույս ունենք՝ լուրջ բան չի եղել տղայիդ հետ:

- Ապրե՛ք, տղերք ջան, ես ձեզ անպայման կգտնեմ ու իմ շնորհակալությունը կհայտնեմ: Իսկ հիմա ցտեսություն:

- Հաջող:

Երբ Արամին դրեցին մեքենայի մեջ, իրենք նույնպես տեղավորվեցին ու շարժվեցին:

- Մա՜մ...

- Դիմացիր, տղաս, հիմա կհասնենք: Ամեն բան լավ է լինելու:

- Ջո՜ւր...

- Ահա, տղաս, խմիր մի քիչ, մինչև կհասնենք,-ասաց Ծովինարը՝ շշից տղային ջուր խմեցնելով:

- Մա՜մ, ցավում է...

- Ոչինչ, տղաս, հիմա կհասնենք հիվանդանոց, ու խոստանում եմ էլ չի ցավի:

Հայրը հազիվ էր զսպում արցունքները, բայց չէր պտտվում տղային հանգստացնելու, վախենում էր չկարողանա տեսնել տղային այդ վիճակում:

- Հանկարծ չնեղվես, հեսա կհասնենք ու դու ոտքի ես կանգնելու, դու ապրելու ես ու քայլես, ինչպես առաջ էր,- զարմանալիորեն ուժ գտնելով, ասաց հայրն ու պտտվեց: Նա երկար նայում էր տղայի կուլ գնացող աչքերին:

- Ցավում է...

- Դիմացիր, հիմա կհասնենք, ճանապարհին քիչ է մնացել:

- Մա՛մ, պա՛պ, ես ձեզ շատ եմ սիրում,-դանդաղ ու փոքր ինչ կմկմալով ասաց Արամը,- եղբայրներիս էլ: Մա՛մ, իրենց կասես՝ թող իմ փոխարեն էլ ապրեն...

- Չասես էլ նման բան, չասե՛ս:

Ծովինարը հասկանում էր պահի լրջությունն ու լուռ արտասվում...

- Կներես, մա՛մ,-վերջին շնչով ասաց Արամը: Պատասխան միայն լսվեց մոր բարձր բղավոցը, որ լսելի էր մեքենայից դուրս անգամ: Մայրը գոռում էր ճակատագրի վրա, պահանջելով մի հարցի պատասխան. «Ինչի՞ համար»:

Երեկո է... նրանց տան լույսը շարունակում է վառվել, բայց տված ջերմությունը նույնը չէ: Արամն էլ չկա... Ձմռան արև է դարձել...

ՍԻՄՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Կուլտուրայի ֆակուլտետի լրագրության բաժնի 1-ին կուրս

Գրանցման վկայական՝ 01Մ00184 տրված է 26.03.2008 թ.
Հասցեն՝ Տիգրան Մեծի 17, հեռ. 59-70-97:
էլ. փոստ՝ Newspaperaspu.am, asryansilva@gmail.com
Տպագրված է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպագրատանը:
Հասցեն՝ Արշակունյաց 2
Տպաքանակը՝ 1800 օրինակ: Ծավալը՝ 2 տպ. մամուլ

Թերթի նյութերի արտատպումներն առանց խմբագրության համաձայնության արգելվում է:
Հղումը պարտադիր է: Թերթը տարածվում է անվճար:
Հանձնված է տպագրության 09.12.2020 թ.

Թերթը կարող եք կարդալ ՀՊՄՀ կայքում՝ www.aspu.am

Գլխավոր խմբագիր՝
Սիլվա ԱՍՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու
Էջադրումը՝ Պետրոս ՎԱՐԴԱՆՅԱՆԻ
Համարի պատասխանատու՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ